

ՇԱՄՇԱԴԻՆ-ԻՋԵՎԱՆԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՈՒ ՂԱՐԱՐԱՂԻ
ԲԱՐԱՐԱՌՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՐՄԻԿ ՄԵԺՈՒՆՑ

Շամշադինի, Կրասնոսելսկի, Իջևանի ու Դիլիջանի շրջանները Հայաստանի հնագույն գավառներից են: Այդ շրջանների բնակչության մի մասը բնիկ է, իսկ մի զգալի մասն էլ եկել է պատմական Արցախ նահանգի տարբեր գավառներից: Մ. Բարխուտարյանցի վկայությամբ¹ հիշյալ շրջանների Զորաթան, Մովսես, Նորաշեն, Կարմիր աղբյուր, Ներքին Ճամբարակ, Նորագյուղ, Զոդաղ գյուղերի բնակչությունը բնիկ է. Արծվաբերդ, Բերդ, Լալիգյուղ, Ուզունթալա (Ալգեհոփտ), Ռեագլու, հաշթառակ, Սև քար, Թալա, Լուսաձոր, Ներքին Աղդան, Աշաշուր գյուղերի բնակչությունը մասամբ է բնիկ, իսկ մեծ մասով տեղափոխվել է Արցախի Զրաբերդ, Խաչեն, Գյուլիստան գավառներից և այլ վայրերից: Բաշգյուղ (Բաշքենդ), Նավուր, Թովուզ, Վարազավան, Վերին Աղդան, Դիլիջան գյուղերը հիմնվել են ուշ շրջանում՝ մերձակա բնակավայրերից տեղափոխված հայերի շնորհիվ: Պողոսքիլիսա (Շամախյան) և Իջևան տարածքի բնակչությունը տեղափոխվել է Երևանի նահանգի Արզնի և Կամրիս (Քյամրիս) գյուղերից: Մի շարք գյուղեր էլ մեծ մասամբ նոր են հիմնվել, որոնց բնակչությունը կազմում են հարևան գյուղերից եկած հայերը:

Այսպիսով, Շամշադին-Իջևանի խոսվածքով խոսող հայերը երկու հիմնական շերտեր են կազմում՝ բնիկներ և Արցախի տարբեր գավառներից տեղափոխվածներ: Բնակչության առաջացման առդ զանազանության հիման վրա էլ Շամշադին-Իջևանի խոսվածքը դրսևորում է լեզվական երկվություն՝ մի խումբ հնչյունական և քերականական հատկանիշներով ախ հարադատ է Արարատյան բարբառին, իսկ մի շարք այլ հատկանիշներով նույնանում է Ղարաբաղի բարբառի հետ: Այդպիսի երկվությունը, բնականաբար, պատճառ է դարձել հայ լեզվաբանների և բարբառագետների անորոշ, երբեմն էլ հասական կարծիքների համար: Այսպես, Հ. Աճառյանը, Ներկայացնելով Երևանի բարբառի տարածման առանձին վայրերը, նրա մեջ է բնութագրում նաև Շամշադինի շրջանը. «Երևանի բարբառը հյուսիսային կողմերը երկու կղզյակներ ալ կձևացնի, մեկը Բորչալուի գավառին մեջ (Շուլավեր, Շամշադին, Լոռի և շրջականները) և երկրորդը Թիֆլիզի Հավաբար թաղը՝ որ Երեվանի գաղթականություն մէջ»²: Նույն աշխատության մեջ նա Ղարաբաղի բարբառի տարածման սահմանը հասցնում է մինչև Դիլիջան և Ղազախի գավառը³: Աճառյանը Ղարաբաղի բարբառի հետագա քննությունից պարզ երևում է, որ հեղինակը Շամշադինի, Իջևանի և Դիլիջանի խոսվածքներն առանձնացնում է և ընդունում որպես Ղարաբաղի մեկ ենթաբարբառ՝ Ղազախի ենթաբարբառ անվանումով: Վերջին կարծիքը հաստատվում է նաև Հ. Զուղուրյանից վերցված նմուշով⁴: Հ. Աճառյանը Շամշադին-Իջևանի խոսվածքի համար ընդունում է նաև Ղազախի ենթաբարբառ անվանումը. «Ղարաբաղի բարբառով կա հարուստ գրականություն. ամենից նշանավորներն են Տմբալի

¹ Մ ա կ ա Ր Ի ա Յ. Բ ա Ր խ ու տ ա Ր յ ա ն ց, Արցախ, Բագու, 1893:

² Հ. Ա ճ ա ռ յ ա ն, էմիլյան ազգագրական ժողովածու, հ. Ը (Հայ բարբառագիտություն), Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911, էջ 37:

³ Նույն տեղում, էջ 61:

⁴ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 73:

նաշանի գրվածքները Ղարաբաղի բարբառով և Ճուղուրյանի պատմվածքները Ղազախի ենթաբարբառով⁵:

Ա. Ղարիբյանը ներկայացնելով Արարատյան բարբառի տարածման սահմանները, գրում է. «Արարատյան բարբառը Դիլիջանի և Ղազախի ու Շամշադինի շրջաններում խառնվելով Ղարաբաղի բարբառի հետ կամ ազդելով այդտեղի խոսվածքների վրա՝ դժալի չափով փոխել է Ղարաբաղի բարբառի ընդհանուր պատկերը, որի հետևանքով դժվար է լինում որոշել, թե այդտեղի բարբառները Երևանին են պատկանում, թե Ղարաբաղին⁶: Նույն աշխատանքի հետագա շարադրանքի մեջ հեղինակն արդեն այն կարծիքն է հայտնում, թե Շամշադինի, Դիլիջանի շրջանների բնակչությունը խոսում է Ղարաբաղի բարբառով⁷:

Եվ ահա, Շամշադին-Իջևանի խոսվածքի՝ Արարատյան ու Ղարաբաղի բարբառների հետ ունեցած փոխհարաբերությունները, ինչպես նաև նրա՝ որպես բարբառային միավորի առանձնացման հարցը որոշելու համար դիմել ենք հայերենի բարբառների համար ընդունված բազմահատկանիշ դասակարգման սկզբունքին⁸: Խոսվածքի հնչյունական և քերականական հատկանիշների քննության համար համեմատության եզր ենք ընդունել մի դեպքում Աշտարակը, իսկ մյուս դեպքում՝ Բոլնիս-Նալչենը, քանի որ առաջինը բարբառային կենտրոն է ընդունված Արարատյան բարբառի, իսկ երկրորդը՝ Ղարաբաղի բարբառի համար: Միավորների քանակը որոշելիս առաջնորդվել ենք Գ. Զահուկանուր պաշտօն քաղած հետևյալ պայմաններով. «Բարբառապոս վայրերի՝ իրարից ոմնեցած տարբերությունները հաշվելիս ա) իրար դիմաց նույնարժեք նշաններ (+ և +, — և —, Գ և Գ, ± և ±, ալլև Գ և ±) առկա լությունը գնահատվում է զրո, բ) — և + (ալլև — և +¹, — և +² և ալլև) նշանների առկա լությունը՝ մեկ միավոր, գ) մնացած բոլոր տարբերությունները (— և Գ, — և ±, + և Գ, + և ±, — և +¹, + և +², +¹ և +² և ալլև)՝ կես միավոր⁹: Խոսվածքի՝ բարբառների նկատմամբ ունեցած տարբերություններն առավել պարզորոշ ցույց տալու համար տարբերակիչ հատկանիշները նախ բաժանել ենք ըստ հնչյունական (բաղաձայնական և ձայնավորային) և ձևաբանական (առկաձայնական, դերանվանական և բայական) համակարգերի, այնուհետև հիշյալ բոլոր հատկանիշները բաշխել ենք հետևյալ երեք տարբեր խմբերի միջև: Առաջին խմբի մեջ են առնված այնպիսի հատկանիշներ, որոնք առկա են Արարատյան և Ղարաբաղի բարբառներում, բայց բնորոշ չեն Շամշադին-Իջևանի խոսվածքին: Երկրորդ խմբի մեջ են առնված այն հատկանիշները, որոնք առկա են խոսվածքում, բայց բնորոշ չեն բարբառներին: Իսկ երրորդ խմբի մեջ են առնվում այն բոլոր հատկանիշները, որոնք թեև առկա են և՛ բարբառներում, և՛ խոսվածքում, սակայն ունեն տիպաբանական-համեմատական տարբերություն:

Արարատյան բարբառի և Շամշադին-Իջևանի խոսվածքի տարբերակիչ հատկանիշները հետևյալ պատկերն են ներկայացնում:

Բարբառին բնորոշ հատկանիշներն են.

1(2). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղություն (բ, գ, զ, ձ, չ, ~բ, գ, դ, ղ, ճ)¹⁰:

2(6). Բ-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն

⁵ Նույն տեղում, էջ 332:

⁶ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 220:

⁷ Նույն տեղում, էջ 230:

⁸ Տե՛ս Գ. Զահուկան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

⁹ Նույն տեղում, էջ 41:

¹⁰ Փակագծում բերված թվանշանները ներկայացնում են Գ. Զահուկանի գրքում տրված գուգաբանությունները:

(պ, կ, տ, ծ, ճ~բ, գ, դ, ձ, ջ):

3(7). Ոչ բառասկզբի շնչեղ-խուլների ապաշնչեղության առկայություն (-փ, -ք, -թ, -ց, -չ~ -պ, -կ, -տ, -ծ, -ճ):

4(11). Տ-ի առնմանական փոփոխությունն ւ, ր, ռ ձայնորդներից առաջ:

5(31). Շնչտակիր ո-ի բարձրացող-երկբարբառային արտասանություն:

6(67). Յուցական դերանունների թեք հոլովաձևերում (և հոգնակի ուղղականում) հավելական տ, դ:

Խոսվածքին բնորոշ հատկանիշներն են.

7(3). Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խուլություն (բ, գ, դ, ձ, ջ~պ, կ, տ, ծ, ճ). պթմբակ<բամբակ, պթրթակ<բարթակ, տթլթր<դալար, տթնթկ<զանակ, ծթք<ձաք, ծէն<ձալն, ճթռթիլ<ջարդեւ, ճրնջիլ<ջնջեւ, ճաղաց<ջաղաց և այլն:

8(34). Քմայնացած ձայնավորների (ա, օ, ու) առկայություն:

9(35). Ա-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ա—ա): Խոսվածքում քմային ա ձայնավորի առաջացումը կապված է Աճառյանի օրենքի հետ, ինչպես՝ պան<բան, պթրթկ<բարակ, կ'ռղթր<գաղար, տան<դան, տանակ<դանակ և այլն:

10(36). Ո-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ո~օ). կ'օղանալ<գողանալ, կ'օռնլ<գողալ, կ'օրծիլ<գործել, կ'օռթնուկ<գորտնուկ, տօղնլ<գողալ ևն:

11(37). Ու-ի դիմաց քմայնացած ձայնավոր (ու~օւ). պարուր<բարուր, կ'արունք<գարուն, կ'լրոխ<գլուխ, կ'ռթան<գութան, տըննց<դեղնուց:

12(30). Լ-ից տարբեր խառն (սիջին շարքի) ձայնավորների (լէ, լւ) առկայություն: Շամշադին—Իջևանի խոսվածքում փակ վանկի շեշտակիր է, ի ձայնավորները արտասանվում են որպես երկբարբառայնացված լէ, լւ հնչյուններ, ինչպես. և >լէ.--խլէլք <խելք, մլէնակ<մենակ, մլէռնիլ<մեռանիլ, մլէնք<մեք, նլէղ<նեղ, սլէրմը<սերմն: Ի>լէ.—ծլէն<ծին, ծլէտ <ծիտ, ծլէր<ծիր, մլէս<միս, մլէտկ<միտ/քլ:

13(52). Նի-ով հոգնակի: Խոսվածքում -նի վերջավորությամբ հոգնակի են կազմում.

ա) բաղաձայնով վերջավորվող երկվանկ և բազմավանկ բառերը՝ բզգա-կան—բզգականնի, աման—ամաննի, ապրանք—ապրանքնի, պարեկամ—պարեկամնի, կարմուռը—կարմուռնի, նամակ—նամակնի:

բ) և բաղաձայնով սկսվող ռէխ—ռէխնի, ռուս—ռուսնի, ռուֆ—ռուֆնի բառերը:

14(51⁻¹). Ք—եր բաղադրյալ հոգնակերտով թվականություն ունեն ի, ու ձայնավորներով վերջավորվող մի քանի բառեր:

15(92⁻¹). Պիտի եղանակիչի սղված ձև. առաջին վանկի սղում (տի, տ, դի, դ): Խոսվածքում հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակները կազմվում են անորոշ դերբայով և դ մասնիկով: Այդ ձևերով արտահայտվում է նաև սահմանական եղանակի ապառնի իմաստ, ինչպես՝ նստիլ դէմ (պիտի նստեմ, նստելու եմ և այլն):

16(100⁻²). Գրաբարատիպ լսնցյալ անկատար: Դերբայավոր անկատար անցյալին զուգահեռ խոսվածքում գործածվում են պարզ անցյալ անկատարի ձևեր, որոնք ըղձական անցյալից տարբերվում են միայն իմաստով, ինչպես նրստի, նրստիւ, նրստէր, նրստինք, նրստիք, նրստին:

17(100⁻⁵). Անցյալ կատարյալի միավանկ հիմքերի եզակի երրորդ դեմքի ե- (է-) նախահավելված: Խոսվածքում նախահավելական է, ի ձայնավորներն ունեն բերել, տալ, դնել, ասել ևն բայերը:

Շամշադին-Իջևանի խոսվածքում առկա են երրորդ խմբի հետևյալ հատկա-

18(8). Քմայնացած Լտնալեզվայինների առկայություն ոչ փոխառյալ բառերում՝ կ'առը<զառն, կ'առնը<զառուն, կ'էրան<գերան, գ'իրանգ'ի<կիրակի, լէրգ'ինը<երկինք:

19(25). Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզուների համեմատությամբ հավելական շնչի (հ) առկայություն՝ հալիվօր<ալևօր, համանը<ամանը, հրմանչիլ<ամաչիլ, հանէր<անեւր, հարգակ<արծակ, հէրիեը<երիեը, հրեգէր<ընկեր, հրեղբորիլ<ընտրել:

20(25-4). Ցուցական դերանունների միջձայնավորային ր-ի դիմաց և (-ր~ն-). ր-ի դիմաց ը հնչյունը առկա է սա, դա, նա դերանունների հոգնակի ուղիղ և թեք հոլովներում՝ արևանք, արհանք, նրհանք, սրհանք, արհանք, նրհանք, սրհանք, արհանք, նրհանք (այնպես):

Այժմ ներկայացնենք այն հատկանիշները, որոնցով Ղարաբաղի բարբառը և Շամշադին-Իշևանի խոսվածքը տարբերվում են միմյանցից:

Բարբառին բնորոշ հատկանիշներն են.

1(6). Բ-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող խուլ պայթականների ձայնեղություն (պ, կ, տ, ծ, և~բ, գ, ղ, ձ, ջ):

2(7). Ոչ բառասկզբի շնչեղ-խուլերի ապաշնչեղության առկայություն (-փ, -ֆ, -բ, -գ, -չ~ւլ, շկ, -տ, -ծ, -ծ):

3(11). Տ-ի առնմանական փոփոխություն ր, ռ ձայնորդներից առաջ-տն~նն:

4(41). Շեշտակիր ե-ի (է-ի) դիմաց վերին շարքի (ավելի փակ) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ե, է, ի, էի):

5(42). Շեշտակիր ու-ի (օ-ի) դիմաց վերին շարքի (ավելի փակ) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (օ, ա):

6(43). Շեշտակիր ի-ի դիմաց միջին կամ ստորին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ի, է, ա):

7(44). Շեշտակիր ե-ի (է-ի) դիմաց ստորին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ե, է~ա, ա):

8(45). Շեշտակիր ու-ի դիմաց միջին շարքի (ավելի բաց) շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (ու~օ, օ):

9(58⁺¹). Ան-ով բացառական:

10(61⁺¹). Գործիականի՝ ով-ից (ով, ուվ, օվ) տարբեր (այդ թվում՝ նրանից ծագող, բայց այլ վերջավորությունների հետ համընկնող) վերջավորություն՝ և՛ եզակի, և՛ հոգնակի թվերի համար ընդհանուր (ավ||ավ):

11(67). Ցուցական դերանունների թեք հոլովաձևերում (և հոգնակի ուղղականում) հավելական ա, դ:

12(91⁺¹). Այլ տիպի դերբայներով բաղադրյալ ապառնի. և-ով վերջացող դերբայներով ապառնի (-աւն, -ակաւն):

Խոսվածքին բնորոշ հատկանիշներն են.

13(17). Բառասկզբի հ-ի դիմաց շրթնային շփական և~ֆ, Խոսվածքում հ-ի դիմաց շփական ֆ ունենք միայն ու ձայնավորից առաջ:

14(27). Ույ-ի դիմաց ոչ շրթնային ձայնավոր (ույ~ի): Ույ>ի փոփոխությունը տեղի է ունենում բաղաձայնից առաջ, ինչպես պիթ<բոյթ, թիլ<թուլ, լիս<լոյս, կապիտ<կապույտ քիթ<քուր:

15(55⁻¹). Ք+էր տիպի հոգնակերտ:

16(59). Խոսվածքում բոլոր բառերի բացառականը (բացառությամբ -ան վերջավորությունը ստացող մի քանի դերանունների) կազմվում է -ց վերջավորությամբ, ինչպես՝ ֆաթիցը, սաթիցը, ճօթիցը, հալուցը, շրեթիցը, արդիցը և այլն:

17(92⁻¹). Պիաի եղանակիչի սղված ձև, առաջին վանկի սղում (աի, ա, դի, դ):

18(100-²). Կրարարատիպ անցյալ անկատար:

19(100-⁵). Անցյալ կատարյալի միավանկ հիմքերի եզակի երրորդ դեմքի ն- (է-) նախահավելված:

Ղարաբաղի բարբառը Շամշադին-Իջևանի խոսվածքից տարբերվում է նաև երրորդ խմբի մեկ հատկանիշով: Այսպես, բարբառին բնորոշ է.

20(24). Բաղաձայնահաջորդ և-ի պահպանություն:

Խոսվածքի համար բնորոշ է.

21(24-1). Բաղաձայնահաջորդ ր (ն ~ ր): Խոսվածքում բազմավանկ բառերի և վերջահնչյունը և նրան նախորդող ր ձայնավորը բնկել է, իսկ միավանկ բառերի վերջում ր-ն պահպանվում է, ինչպես՝ ալն > ալը, բեռն > պէր, եզն > յէր, թոռն > բոռը, կաթն > կաթը, հարսն > հարսը, ձեռն > ձեռը, մուկն > մուկը, նուռն > նուռը, տասն > տասը և այլն:

Տարբերակիչ հատկանիշների ընդհանուր պատկերից պարզվում է, որ Շամշադին-Իջևանի խոսվածքը Արարատյան բարբառից տարբերվում է 20 հատկանիշներով (14 հնչյունական և 6 քերականական), իսկ Ղարաբաղի բարբառից՝ 21 հատկանիշներով (12 հնչյունական և 9 քերականական): Նշենք նաև, որ բերված հատկանիշները ոչ միատեսակ արժեք ունեն: Այսպես, խոսվածքի՝ Արարատյան բարբառի նկատմամբ ցուցաբերած տարբերակիչ հատկանիշներից միայն 14-ը, իսկ Ղարաբաղի բարբառի նկատմամբ ցուցաբերած 21 հատկանիշներից միայն 15-ը ունեն մեկ միավորի արժեք, մինչդեռ մյուս 6 տարբերակիչ հատկանիշներն ունեն կես միավորի արժեք: Ուստի ամբողջական միավորներով արտահայտված՝ տարբերակիչ հատկանիշների ընդհանուր քանակը Արարատյան բարբառի համեմատությամբ հավասարվում է 17-ի, իսկ Ղարաբաղի բարբառի համեմատությամբ՝ 18-ի: Այսպիսով, հայ բարբառների համար ընդունված բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի համաձայն միավորների այդ քանակով Շամշադինի, Կրասնոսելսկի, Իջևանի և Դիլիշանի տարածքի հայերի խոսակցական լեզուն առանձնանում է որպես մեկ առանձին խոսվածք: Քանի որ տարբերակիչ հատկանիշների համարյա միևնույն քանակով (իհարկե, ոչ միևնույն հատկանիշներով) Շամշադին-Իջևանի խոսվածքը հեռանում է թե՛ Արարատյան և թե՛ Ղարաբաղի բարբառից, ուստի այն կոչում ենք «միջին խոսվածք»:

ВЗАИМООТНОШЕНИЯ ШАМШАДИНО-ИДЖЕВАНСКОГО ГОВОРА С АРАРАТСКИМ И КАРАБАХСКИМ ДИАЛЕКТАМИ

БАРМИК МЕЖУНЦ

Р е з ю м е

Шамшадино-иджеванский говор по своим многочисленным фонетическим и морфологическим признакам связывается с Араратским и Карабахским диалектами. Для выяснения этой связи следует рассмотреть принцип многопризнаковой классификации армянских диалектов и выделить те важные языковые признаки, которые имеют различительные свойства. Из исследований явствует, что в отношении Араратского диалекта говор имеет 17, а в отношении Карабахского диалекта—18 различительных признаков. Так как говор почти одинаковым число признаков отличается как от Араратского, так и Карабахского диалектов, то его можно назвать «средним говором».